

3061

5352

Լ. ԲՈՒԲԵԳՅԱՆ

ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ՄՍՈՒՐԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱ-
ՅՐՋԱՆԻ ԽՆԱՄՔԻ ՅԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ՄԱՍԻՆ

636.3

F-84

ԳՅՈՒՂԶԲՈՑ

1934

ՅԵՐԵՎԱՆ

5352


636.3
P-81

0 OCT 2010



ՀՐԱՀԱՆԳ
ՎՈՋԽԱՐՆԵՐԻ ՄՍՈՒՐԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱ-
ՇՐՋԱՆԻ ԽՆԱՄՔԻ ՅԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ՄԱՍԻՆ

14261



05.03.2013

22.184



Գրադատ՝ Ս. Իսահակյան
Տեխն. խմբագր. Պ. Սարգսյան
Մեջագրեր՝ Խ. Այվազյան

37917.62

Հանձնվել է արտագրության 1934 թ. փետրվարի 15-ին

Ստորագրվել է ավագրելու 1934 թ. փետրվ. 23-ին

Գլավլիտ № 111

Տիբաժ 2000

Գաղ Խ 114

ՅՈՒՆԵՍԿՈ ԳՈՒՂԱՐԱՆԻ ՏՊԱՐԱՆ. ՆԱԼԱՆԳՑԱՆ 50 ՀԵՔ. Խ 94

I. ՄՍՈՒՐԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Վոչխարաբուծական տնտեսությունների համար ձմեռելը վճռական նշանակություն ունի ինչպես հոտերի վերարտադրման, նույնպես և տարեկան արտադրական առաջադրանքների կատարման գործում: Աշնան արոտային խնամքի ժամանակ ամեն կերպ պիտի աշխատել վոչխարներին ճարպային գիրություն հասցնելու: Այդ վիճակում նրանք ավելի քիչ են յենթակա դանազան հիվանդությունների, սատկումները լինում են նվազագույն չափով և ստերջների տոկոսն անհամեմատ պակաս է լինում և ստացվում են առողջ դառնել:

Աշնան վերջերին կրկին անգամ ստուգման պիտի յենթարկել բոլոր վոչխարներին և առանձնացնելով հիվանդներին՝ յենթարկել բուժման: Ֆերբաշնանը հիվանդները չեն հայտնաբերվում ու բուժվում ձմռան ընթացքում, հիվանդությունը հետադարձաբար առաժմում է ամբողջ հոտի մեջ, իսկ այդ ժամանակ շատ դժվար է բուժում անցկացնել: Հենց այդ պատճառով ել արոտային խնամքի ժամանակ վերջնականապես պիտի բուժել վոչխարներին քոսից, ծաղիկից և ճիճվային այլ հիվանդություններից, վորպեսզի դրանից հետո վոչխարներն արոտում լավ կազդուրվեն, գիրանան ու ապա մսուրային խնամքին դրվեն:

Մսուրային խնամքի նախորդակին ամբողջ հոտը պիտի յենթարկել ստուգման և առանձնացնել խոտանման յենթակա վոչխարները, վորից հետո վերակազմել հոտերն ըստ հասակի և սեռի: Հղի մաքրներից պիտի կազմել առանձին հոտեր: Թույլ մատուցաններից և նիհար վոչխարներից պիտի կազմել առանձին հոտեր կամ խմբեր, վորոնց նկատմամբ սահմանել հատուկ խնամք և կերակրում: Վոչխարաբուծական այն ֆերմաներում, վորտեղ կան մեկից ավելի ցեղի վոչխարներ (մազեխ, բալբաս), պիտի դատել և խմբավորել առանձին-առանձին:

Վոչխարների խոտանում կատարելուց հետո պիտ համայրել հոտերն ի հաշիվ խոտանման: Նայած տեղի պայմաններին, վոչ-

խարների հոտերի մեծութունը կարելի յե ընդունել 500—800 գուլա:

Առաջին հերթին մսուրային խնամքին պիտի դնել մատղաշներին, խոյերին, տոհմայիններին, ապա մայրերին ու ամորձատվածներին:

Նախքան մսուրային խնամքին դնելն անհրաժեշտ ե ինչպես վոչխարանոցները, նույնպես և նրանցում գտնված ամբողջ ինվենտարն ախտահանել կրի 50%₁₀ լուծույթով, կարբոլյան թրթվումով և այլ նյութերով:

II. ՇԵՆՔԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հաջող ձմեռելու համար վոչխարների հոտերը համապատասխան շենքերով ապահովելն ունի վճռական նշանակություն:

ՎՈՉԽԱՐԻ ՏԵՂԸ ՊԻՏԻ ԼԻՆԻ ԱԶԱՏ

Սեղմված շենքերում վոչխարների կուտակումը հաճախ ունենում ե վատ հետեվանքներ՝ ստանում են ջարդվածքներ, յերբեմն ել անհրաժեշտ քանակությամբ ոգ չլինելու հետեվանքով խեղդվում են: Այդ իսկ պատճառով ել պահանջվում ե առանց հաշվումների յերբեք վոչխարներին չտեղավորել վոչխարանոցներում: Յուրաքանչյուր հասակավոր վոչխարին պիտի հաշվել 0,8—0,9 քառակուսի մետր տարածություն, իսկ մատղաշներին՝ 0,6—0,7 քառ. մետր:

ՎՈՉԽԱՐԱՆՈՑԸ ՊԻՏԻ ԼԻՆԻ ՏԱՔ

Վոչխարանոցը պիտի լինի լուսավոր, չոր, տաք և զերծ միջանցիկ քամիներից: Վոչխարանոցները վոչ մի ճեղք կամ անցք չպիտի ունենան: Հիշյալ պայմանների բացակայության ժամանակ հաճախ տեղի յեն ունենում զանազան հիվանդություններ ու սատկումներ: Վոչխարանոցներում ձմեռ ժամանակ անհրաժեշտ ե պահպանել հետեվյալ ջերմաստիճանը՝ հասակավոր վոչխարների համար 7—8°C, մատղաշ վոչխարների համար 10—12°C:

Տաք վոչխարանոցներում վոչխարներին տրվելիք կերը տնտեսվում ե, իսկ ցուրտ վոչխարանոցներում անհամեմատ ավելի կեր ե ծախսվում:

ՎՈՉԽԱՐԱՆՈՑԸ ՊԻՏԻ ԼԻՆԻ ԼՈՒՍԱՎՈՐ

Կենդանի որգանիզմի կանոնավոր զարգացման համար մի շարք այլ ֆակտորների հետ միաժամանակ պահանջվում ե նայել լուսավոր շենքեր: Այդ պատճառով ել բոլոր վոչխարանոցներն ել պետք ե ունենան լուսամուտներ: Յեթե վոչխարանոցը տիպական չե, անհրաժեշտ ե բանալ լուսամուտներ: Վոչխարանոցի լուսավորությունը բավարար ե համարվում, յերբ վոչխարանոցի մակերեսը լուսամուտների մակերեսի նկատմամբ ունի 1:20 հարաբերություն: Լուսամուտների դասավորումը պիտի լինի վոչխարանոցի ամբողջ յերկայնությունը: Լուսամուտների բարձրությունը հատակից պիտի լինի վոչ պակաս, քան 1,5 մետր:

ՎՈՉԽԱՐԱՆՈՑԸ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱ ՈՂԱՆՑՔ ՅԵՎ ԲԱՎԱՐԱՐ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՈՂ

Սղմված և նեղ վոչխարանոցներում մատղաշները լավ չեն աճում և վոչխարները յենթակա յեն լինում զանազան հիվանդությունների:

Վոչխարների զանազան խմբերի համար պահանջվում ե ողի հետեվյալ ծավալը՝

Հասակավորներ 2,5. խոր. մետր

Մատղաշներ 1,8. խոր. մետր

Կարելիոր նշանակություն ունի նայել կանոնավոր որանցքները: Ողավորության բացակայության դեպքում առաջանում ե մի շարք վնասակար գաղերի կուտակում, վորը և թունավորում ե կենդանիների որգանիզմը: Լավագույն որանցքներն են համարվում Մուլլերի սխեմայի խողովակները:

III ԻՆՎԵՆՏԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Վոչխարների մսուրային շրջանի նորմալ խնամքը և պահպանումն ապահովելու համար պահանջվում ե յուրաքանչյուր վոչխարանոցում ունենալ հետեվյալ ինվենտարը՝

1. Չորս մետր յերկարությամբ և 0, 4 մետր լայնությամբ կերամաններ խտացրած կերերի, դարմանի և սիլոսի համար. կերամանների պահանջը հաշվելիս պիտի վերցնել յուրաքանչյուր գլխին 0, 3 մետր:

2. Յուրաքանչյուր հոտի համար պիտի ունենալ 1—2 հասարակատեղի «летучая мышь», անհրաժեշտ քանակությամբ պատգամակներ, բահեր, յեղաններ, դուլյեր և այլն:

3. Այն տնտեսություններում, վորտեղ ջուրը հեռու չէ գտնվում, վոչխարանոցներին կից, ջրելու համար տակառներ և տաշտեր պիտի ունենալ:

4. Հովիվների համար պիտի ունենալ յերկուսական գոգնոց և լվացարան:

5. Յուրաքանչյուր վոչխարաբուծական տնտեսություն պիտի ունենա իր ապտեչկան անհրաժեշտ դեղորայքով և գործիքներով, անասուններին առաջին ոգնությունը ցույց տալու համար:

ԱՆՀՐԱԺԵՂՈՒ ԴԵՂՈՐԱՅՔ

Կարբոլյան թթվի լուծույթ	500	գրամ
Կրեոլին	500	»
Իոդի լուծույթ	50	»
Սկիպիդար	300	»
Պղնձի արջասպի 20% լուծույթ	100	»
Վազելին	50	»
Կամֆորայի մաղ	50	»
Կրեոլինի	300	»
Կանաչ սապոն	30	»
Վերքերի չորացման փոշի	50	»
Գլաուբերի աղ	500	»
Մարլա	10	մետր
Գիգրոսկոպիկ բամբակ	100	գրամ
Կոմպրեսի համար կլեյոնկա	1	մետր
Անասնաբուժական ջերմաչափ	1	հատ
Ռետինե բալոն 180,0 սմ.	1	»
Անդամահատման դանակ	1	»
Սրածայր	1	»
Տրոկար	1	»

Մ Ե Կ ՈՒ Ս Ա Ր Ա Ն

Յուրաքանչյուր վոչխարաբուծական ֆերմա հիվանդ վոչխարների համար պիտի ունենա մեկուսարան: Զի թուլատրվում

վորպես մեկուսարան ոգտագործել նույն վոչխարանոցը, յերբ նրա մի մասը կտրուվ են և ոգտագործում վորպես մեկուսարան: Յեթե տնտեսությունը չունի կառուցված հատուկ մեկուսարան, այդ դեպքում կարելի չէ տնտեսության մեջ յեղած գոմերից մեկը վերանորոգել, ախտահանել և տեղավորել հիվանդ անասուններին:

Մեկուսարանի տարողությունը պիտի կազմի ընդհանուր վոչխարանոցի 3—4%: Արգելվում է նիհարած և հյուսված վոչխարներին մեկուսարան անելը:

IV ԿԵՐԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Նախքան վոչխարներին մսուրային կերակրման փոխադրելը, անհրաժեշտ է հաշվի առնել տնտեսության ունեցած կերերի պաշարը, կազմել կերի բալանսը և մսուրային ամբողջ ժամանակաշրջանն ապահովել անհրաժեշտ քանակությամբ կերերով: Թույլ չտալով, վոր կերի բալանսում տեղի ունենա դեֆիցիտ: Տնտեսության կերապաշարի քանակը պարզելուց հետո անհրաժեշտ է կազմել կերի ծախսման որացուցային պլանը տասնորյակներով:

Անհրաժեշտ է ֆերմայի ամբողջ կերապաշարը կենտրոնացնել վոչխարանոցներին մոտ և ցանկապատել: Մսուրային շրջանի համար պետք է պատրաստել միջին հաշվով (նայած մսուրային շրջանի տևողության) 2—2,5 ցենտներ խոտ: Այնտեղ, վորտեղ կապակասի հիշյալ քանակությամբ խոտ, կարելի չէ խոտի 25%—ը փոխարինել լավ վորակի գարու կամ վարսակի դարմանով, մեկ կիլոգրամ խոտի դիմաց վերցնելով 1,5 կիլոգրամ դարման: Մատուցաներին և մայրերին ծնի շրջանում պիտի կերակրել ունեցած կոպիտ կերի լավ տեսակներով: Վոչխարաբուծական այն ֆերմաները, վորոնք սիլոս ունեն, կարող են կերի ոացիոնի մեջ մտցնել նաև սիլոս, կերակրման շրջանը հաշվելով 50 որ՝ որական մեկ կիլոգրամի հաշվով: Սիլոսը լավ է ազդում վոչխարների մարսողության և բրդատվության վրա, սակայն պիտի զգուշանալ և բորբոսնած կամ փչացած սիլոսով չկերակրել վոչխարներին: Սիլոսով կերակրելուց հետո անհրաժեշտ է կերամանները մաքրել կերի մնացորդներից: Սիլոս տալ վոչխարներին աստիճանաբար 0,5 կիլոգրամից հասցնելով 2 կիլոգրամի: Հղիության վերջին շրջանում և ծնի սկզբնական շրջանում վոչխարներին սի-

լոս տալը պիտի դադարեցնել: Վատ յեղանակներին վոչխարնե-
րին պիտի կերակրել վոչխարանոցներում, իսկ լավ յեղանակնե-
րին՝ վոչխարանոցների բակերում կամ աղալներում: Վոչխար-
ներին տրվելիք որակյա կերաբաժինը բաղխել հետևյալ կարգով՝
I Կերակրումը կատարել առավոտ. ժամը 7-ին խոտով:

II » » » » ցերեկվա » 12-ին սիլոս, ապա խոտ:

III Կերակրումը կատարել յերեկոյան ժամը 5-ին խոտ և դարման:
Վոչխարների առողջությունը և նրանց բրդի վորակը պահ-
պանելու համար անհրաժեշտ է վոչխարանոցներն ապահովել ան-
հրաժեշտ քանակությամբ ցամաքարով (փեյին կամ ծղնոտ):

ԿԵՐԱԿՐՄԱՆ ՄԻՋԻՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Կանոնավոր կերակրման դեպքում մեծահասակ վոչխար-
ների որակյա կերի միջին քանակը հետևյալն է՝

Խոտ 2 կիլոգրամ

Դարման 0, 5 կիլոգրամ

Սիլոս կամ արմատապտուղ 1, 0 կիլոգրամ

Արմատապտուղները տալ նախապես այգալիսին լվանալով
և կտրտելով: Ամեն անգամ կերակրելուց առաջ անհրաժեշտ է
կերամանները մաքրել կերերի մնացորդներից: Արգելվում է
վոչխարներին փտած կամ բորբոսնած կերեր տալը:

V ՁՄԵՌԱՅԻՆ ԱՐՈՏՆԵՐՈՒՄ ՎՈՉԽԱՐՆԵՐԻՆ ԱՐԱԾԵՑՆԵԼԸ

Լավագույն և մոտակա արոտները պիտի հատկացնել տոհ-
մային վոչխարներին: Վոչխարաբուծական այն ֆերմաները,
վորոնք ունեն ձմեռային արոտներ և գյուղնեյներ, պիտի ձեռ-
նարկեն ձմռան ընթացքում կանոնավոր կերպով վոչխարներին
արածեցնելու: Ամառը և աշնանը ձմեռվա համար առանձնացրած
արոտներում անասուններ չպիտի արածեցնել, վորպեսզի ձմռան
ընթացքում արածելու համար հարուստ բուսականություն լինի:
Վոչխարների ձմռան կանոնավոր արածեցնելը խոշոր չափով նը-
պաստում է նրանց արտադրողականության բարձրացմանը՝

1. Նպաստում է բրդի յելանքի ավելացմանը

2. « » » վորակի լավացմանը

3. » » » վոչխարների գերացմանը և առողջ սե-
բունգ ստանալուն:

Վոչխարներին ամեն ժամանակ չի կարելի ձմեռային արո-
տի հանել. ուժեղ քամիներ, բուքեր և սառնամանիքներ յեղած
որերին արգելվում է վոչխարն արոտ հանել: Ձյան շերտի սառած
որերը նույնպես չպիտի արոտի հանել: Վոչխարներին պիտի ա-
րածեցնել այնպիսի արոտներում, վորտեղ խոտը սառցակալած
չէ, քանի վոր վոչխարներն ուտելով սառույցը, սառեցնում են
ստամոքսի պատերը, վորից վոչխարները վիժում են: Ձմեռային
արոտների ընտրությունը պիտի կատարել աշնանից, հատկաց-
նելով այն արոտները, վորոնք ունեն լավ և խիտ բուսականու-
թյուն: Վորպեսզի մայր վոչխարները ձյուն չուտեն, անհրաժեշտ
է նախ քան նրանց արոտի հանելը թեթև կերպով կերակրել
խոտով 0,5 կիլոգրամի սահմաններում:

Ձմեռը վոչխարներին արոտի պիտի հանել ժամը 10—11-ից
վոչ չուտ և արոտից վերադարձնել յերեկոյան ժամը 4—5: Յեթե
արոտավայրերը վատ են և ձյան շերտը հաստ է, վորի պատճա-
ռով վոչխարները չեն կշտանում, անհրաժեշտ է յերեկոյան արո-
տից վերադառնալիս տալ լրացուցիչ կեր, յուրաքանչյուր գլխին
4—0,5 կիլոգրամ խառ: Վոչխարաբուծական այն տնտեսու-
թյունները, վորոնք ձմեռային արածեցում են կիրառելու, վոչ-
խարների աշնանային խուզումը մի քիչ վաղ պիտի կատարել,
վորպեսզի այդ ժամանակամիջոցում նրանք լավ բրդակալեն:

Ձմեռային արոտներում վոչխարներին արածեցնելու ժամա-
նակ խստիվ կերպով հետևել վոչխարների վիճակին: Ինչպե՞ս
նկատվի, վոր վոչխարները նիհարում են, անհրաժեշտ է ավելաց-
նել կերաբաժինը լավագույն կերերով: Ձմռան համար առանձնաց-
րած արոտները ժամանակին պիտի կցել համապատասխան վոչ-
խարի հոտերին: Արոտամասերի կանոնավոր և հավասարաչափ
ոգտագործման համար անհրաժեշտ է արոտը բաժանել ավելի
փոքր արոտամասերի և կազմել նրանց ոգտագործման որացու-
ցային պլանը: Դրանով մենք ամբողջ ձմռան ընթացքում ապա-
հոված կլինենք հոտը լավագույն արոտով, և վոչխարները գար-
նանն արոտի դուրս կգան առողջ և գեր:

ՋՐԵԼԸ ՅԵՎ ԱՆ ՏԱԼԸ

Վոչխարներն իրենց ծարավը ձյունով չպիտի հագեցնեն,
վորի համար անհրաժեշտ է ժամանակին ջրել վոչխարներին:

Ձմեռը վոչխարներին սովորաբար ջրում են մեկ անգամ որվա տաք ժամերին: Յեթե մայրերին տրվում են ջրառատ կերեր (սիլոս և այլն), այդ դեպքում ջրել պիտի ջրառատ կերերով կերակրու- մից հետո:

Նյութերի կանոնավոր փոխանակման համար անհրաժեշտ է վոչխարներին տալ նաև աղ որական մեկ գլխին 5—6 գրամի հաջվով: Աղը լավ է տալ աղի կտորներով, վորը նրանք լիզում են կարիք ունեցած ժամանակ:

VI ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Վոչխարների աճման և պահպանման գործում խոշոր չա- փով խոչնդոտ են հանդիսանում վոչխարների մեջ տարածված ճիճվային հիվանդությունները, վորոնք առաջացնում են վոչխար- ների քափանազ հիվանդությունը: Այդ հիվանդություններից պիտի շատ զգուշ լինել և վոչխարներին դերձ պահել: Պակաս վը- նաս չեն հասցնում վոչխարաբուժությանը քոսը, ծաղիկը և այլ հիվանդությունները:

ՔՈՍ ՅԵՎ ԾԱՂԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վոչխարաբուժությանը պակաս փնաս չեն հասցնում քոս և ծաղիկ հիվանդությունները: Վոչխարաբուժական այն ֆերմա- երում, վորտեղ տարածված է վոչխարի քոս և ծաղիկ հիվան- դությունը, անհրաժեշտ է այդպիսիներին անմիջապես մեկուտաց- նել առանձին վոչխարանոցում և նրանց համար սահմանել հա- տուկ խնամք և կերակրում: Այն հովիվները, վորոնք խնամում են քոսով հիվանդ վոչխարներին, չպիտի շփվեն առողջ վոչխար- ների հետ: Շարունակ պիտի ստուգել, յեթե առողջ վոչխարների մեջ հայտնաբերվի քոսով բռնվածներ, այդպիսիներին անմիջա- պես պիտի առանձնացնել և տեղավորել հիվանդ վոչխարների խումբը: Հոտի մեջ ծաղիկ հիվանդություն յերևալու դեպքում անհրաժեշտ է անմիջապես կարանտին սահմանել: Ծաղիկով ծանր հիվանդ վոչխարներին անասնաբուժական պերսոնալի միջոցով պիտի առանձնացնել և սիճուկ սրսկել: Քոսով հիվանդ վոչխար- ների վերքերն անասնաբուժական պերսոնալի ցուցմունքով ծը- խախտից կամ կրեոլինից պատրաստված լուծույթներով պիտի

լվանալ: Սովորաբար մինչև ցրտերի ընկնելը քոսով հիվանդ վոչ- խարներին լողացնում են կրեոլինից պատրաստված 20|0-ային հալաքոսային լուծույթներում, այդ նպատակի համար պատրաս- տած հաաուկ լողարաններում: Հիվանդ վոչխարներին համար պի- տի սահմանել կերակրման ավելի ուժեղ ոացիոն: Միանգամայն արգելվում է վոչխարներին մեկ վոչխարանոցից մյուսը տեղա- փոխելը:

ԾԻԾՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վոչխարներն ավելի շատ վարակվում են ստամոքսա-ճիճվային և թոքա-ճիճվային հիվանդություններով, վորոնք առաջացնում են վոչխարների քափանազ հիվանդությունը: Ծիճվային հիվան- դությունների ժամանակ, յերբ ձեռք չեն առնվում անհրաժեշտ միջոցներ, վոչխարները նիհարում են և սատկում են մեծ քանա- կությամբ: Ծիճվային հիվանդությունների դեմ պայքարելու հիմ- նական միջոցն է նախադրուշանալ հիվանդությունից: Ծիճվային հիվանդությունների տարածողները հանդիսանում են շները և շնագայլերը: Թափառող շներին և շնագայլերին պիտի սպանել հիվանդությունը կանխելու համար: Վոչխարաբուժական ֆեր- մաների բոլոր շները պիտի յենթարկվեն հակաճիճվային բուժ- ման: Շներին արգելվում է տալ դալիջայով հիվանդ և սատկած կամ մորթած վոչխարների գլուխները, թոքերը, լյարդը և այլ որգանները: Ամեն կերպ պիտի աշխատել, վորպեսպի վոչխարնե- րի և խոշոր յեղջուրավոր անասունների դիակները, շները, գայ- լերը և շնագայլերը չքաղցրեն և չտարածեն հիվանդությունը:

Թոքաճիճվային հիվանդության ժամանակ վոչխարներն ըս- կսում են հազալ և նիհարել: Մսուրային ժամանակաշրջանում վարակված հոտերն ուժեղ պիտի կերակրել, վորպեսպի մինչև արտա- դուրս դալը նրանք չնիհարեն: Արոտում նրանք կարճ ժամանակա- միջոցում կաղդուրվում են և շնչողական խոզովակից հազի մի- ջոցով դուրս են թափվում պարադիաների մեծ մասը:

Այն տնտեսությունները, վորտեղ կան լյարդի-ճիճվային հի- վանդություններ (ֆասցիոլոզ), անհրաժեշտ է վոչխարներին բու- ժել անասնաբուժական պերսոնալի դեկավարությունը:

Մեծ մասամբ վոչխարները վարակվում են ճիճվային հի- վանդություններով, յերբ արածում են խոնավ, ճահճացած արոտ-

ներում և շրջում են կանգնած և լճացած ջրերով: Հենց այդ պատճառով ել կատեգորիկ կերպով արգելվում է՝

ա) Վոչխարներին և առանձնապես մտողաշներին ջրել լճակներից, ճահճացած ջրերից և գյուլերից:

բ) Արգելվում է վոչխարներին արածեցնել տափաստանային, խոնավ և ճահճային արոտներում:

ՎԱՐԱԿԻՉ ՎԻԺՈՒՄ

Վիժումը կարող է լինել վարակիչ և վոչ վարակիչ: Վոչխարների վարակիչ վիժումը առաջ է գալիս հատուկ միկրոբով վարակվելուց, վարը և առաջ է բերում վիժում մեծ մասամբ հղիության չորրորդ ամսում:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Վիժած բոլոր մայրերին անմիջապես անջատել մեկուսաբան: Ընկերքը այրել կամ թաղել հողի մեջ:

2. Բոլոր վիժած մայրերին առանձնացնել հատուկ խմբում և նրանց նկատմամբ սահմանել հատուկ խնամք, միաժամանակ թույլ չտալ խառնվելու առողջներին:

3. Այն շենքը, վորտեղ գտնվում են վիժած մայրերը, շարաթը մեկ անգամ ավտահանել կրային լուծույթով:

4. Զուգավորման սեզոնի ժամանակ այդ մայրերի համար առանձնացնել խոյեր, վորոնց այլևս չթողնել առողջ մայրերի մեջ:

2. Յեթե նախորդ ձմռանը վոչխարանոցում տեղի յե ունեցել վարակիչ վիժում, անհրաժեշտ է մայր վոչխարներին տեղավորել մի այլ վոչխարանոց, իսկ այնտեղ ավտահանել և տեղավորել սուբան վոչխարներին, նախապես տառթը կտրել, դուրս տանել և լավ մաքրել վոչխարանոցները:

VII ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Վոչխարների հոտերի սպասարկման համար լավագույն առանապահ-կոլտոգներից կազմակերպվում են մշտական բրիգադներ: Բրիգադի մեծությունը սահմանվում է նկատի առնելով ֆերմայի վոչխարների քանակը և խնամքի ու պահպանման պայմանները: Այն դեպքում, յերբ վոչխարների հոտը բաղկացած է 500 մայր վոչխարից և 200—250 գլուխ մատղաշներից, կազմակերպվում է բրիգադ բաղկացած 5 հոգուց, վորոնցից մեկն ավագ հովիվ-բրիգադերն է, վորը մյուսների հետ աշխատում է հավասար և միաժամանակ պատասխանատու յե՝

ա) Փերմայի ներսում ուժերի ճիշտ դասավորմանը և աշխատանքների ճիշտ բաշխմանը:

բ) Տարեկան, յեռամայա և ամսական առաջադրանքների կատարմանը:

գ) Հոտի և ինվենտարի պահպանմանը:

դ) Կատարում է աշխատանքի հաշվետվումը և աշխորների գրանցումները:

ե) Առանաբուժի ցուցմունքներով բուժում է հիվանդ առանառներին:

զ) Հսկում է կերերի կանոնավոր ծախսման վրա:

է) Հետևում է զոովետմինիումի կիրառմանը:

ը) Կազմում է սառկած առանառների վերաբերյալ արձանագրություններ:

թ) Մաշկում և մորթիները և կատարում է նրանց նախնական վերամշակումը:

Շ Ա Ն Ո թ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն.—Այն վոչխարաբուծական ֆերմաները, վորոնք ունեն 500 և ավելի մայր վոչխար, պիտի ունենան ազատ ֆերմայի վարիչ: Յերբ ֆերմայի հոտը բաղկացած է 250 գլուխ մայր վոչխարներից և 100—150 մատղաշներից, սպասարկում են 3 հոգի, այդ թվում նաև բրիգադիրը, իսկ 100—150 գլուխ մայրերը և նրանց մատղաշներն սպասարկում է մեկ հովիվ իր ոգնականի հետ: Բրիգադի յուրաքանչյուր անգամ պետք է գիտենա իր աշխատանքը և նրա կատարման կարգն ու ժամանակը:

Յուրաքանչյուր բրիգադայի համար պիտի սահմանել նրա տարեկան արտադրական առաջադրանքը և առանառների խնամքի ու պահպանման կարգը, վորպեսզի բրիգադայի յուրաքանչյուր անգամին պարզ լինի՝

ա) Կերակրման նորմաները և կերակրման կարգը, իբրնամքն ու պահպանումը:

բ) Զոոտեխնիկական-առանաբուժական միջոցառումները:

գ) Արտադրանքի միավորի դործարքային գնահատումն և հաասնելիք աշխորների քանակը:

Բրիգադայի բոլոր աշխատանքները ճշտորեն համապատասխանեցվում են առանաբուժական-զոոտեխնիկական ժահանջներին և սահմանված ներքին կարգապահական կոնուններին:

Փերմայի արտադրողականությունը բարձրացնելու և հոտի աճն ապահովելու նպատակով ֆերմայում բոլոր աշխատանքները կազմակերպվում են դործարքային հիմունքներով: Բրիգադի տարեկան արտադրական առաջադրանքը կազմվում է հոտի պահպանման, գառների, ըրգի, կաթի, մե-

սի յեղանքի արտադրական հիմնական ցուցանիշները հիման վրա, ըստ վորոշում բրիգադի աշխուրհի հատկացումները կատարվում է յեղանակով բրիգադի արտադրական առաջադրանքի կատարումից: Համաձայն Հ. Ժ. Կ. Կոլեգիայի մարտի 8-ի վորոշման, վոլխարարութիւն ընադավառում աշխատողների համար սահմանված են աշխատանքների հետեւյալ գնահատումները՝

ա. Ֆերմայի վարելի և բրիգադի համար, վորոնք աշխատում են առաջին տարին՝ 1,25 աշխատանքային ուր, յերկու և ավելի տարի աշխատելու դեպքում՝ 1,50 աշխուր:

բ) Ավագ հովվին 1,25 աշխուր

գ) Հովվին 1,00 »

դ) Հովվի ոգնականին 0,75 »

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

№	ԲՐԻԳԱԴԱՅԻ ԱՐՏԱ- ԴՐԱՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	Արտադրական աշխատանքի ցուցանիշները գլուխ և անոթները	Արտադրանքի միավորի գնահատումները աշխուրհով				Տարեկան առաջադրանքը կատարելու դեպքում կտրվի աշխուր	
			Հովվին	Բրիգադի ղեկին	Ամբողջ բրիգադի ղեկին	Հովվին	Բրիգադի ղեկին	Ամբողջ բրիգադի ղեկին
1	Մնի հաշուրդ ուրը հաշվի առած յուրաքանչյուր կենդանի գառան համար	410	0,12	0,15	0,51	49	61	208
2	Ծծից կարելու ժամանակ յուրաքանչյուր կենդանի գառան համար	390	0,08	0,1	0,34	32	40	136
3	7-ամսական հասակում գառների յուրաքանչյուր ցենտներ կենդանի ջաշի համար	85	0,6	0,75	2,55	51	64	217
4	Տարվա ընթացքում վորջ գահպանած յուրաքանչյուր մայր վոլխարի համար	470	0,12	0,15	0,51	56	70	238
5	Յուրաքանչյուր ցենտներ բրդի և գլուխամի համար	9,5	6	7,5	25,5	57	71	242
6	Յուրաքանչյուր ցենտներ կաթի համար	200	0,60	0,70	2,20	120	140	500
	Ընդամենը	—	—	—	—	365	446	1541

Ծ Ա Ն Ո Թ Ո Ի Թ Ց Ո Ի Ն.—Վերոհիշյալ որինակելի գնահատումները կատարված են մաղելի և բալբաս ցեղերի համար, իսկ այլ ցեղերի համար գնահատումներ կատարելիս պիտի ճշտել, յեղանակով տվյալ ցեղի արտադրողականութիւնից:

Հաշվումների ժամանակ, վորպես որինակ վերցված է 500 գլուխ մայր վոլխար և 400 գլուխ գառներ, վորոնց արտադրանքի ժամանակաշրջանում խնամում են չորս հոգի, այդ թվում է նաև ավագ հովիվ-բրիգադիւրը:

Վերցված են հետեւյալ քանակական ցուցանիշները՝

ա) Մեծահասակ վոլխարների սատկելը

տարվա ընթացքում վոլ ավելի քան 60%

բ) Կաթ յուրաքանչյուր կթվող մաքուր 50 կիլոգ.

գ) Բուրդ մեկ մեծահասակ վոլխարից . . 1,6 »

դ) Գլուխամ մեկ գառից 0,4 »

ե) 100 գլուխ մայրերից 6 ամսական հասակում

կում կենդանի պահել գառներ 80 գլուխ

Արտադրական առաջադրանքները գերակատարողներին, համաձայն Հայաստանի Հ. Ժ. Կ. Կոլեգիայի 1933 թ. ապրիլի 11-ի վորոշման, սահմանվում են ընամթիւրով և դրամով հետեւյալ պարգևատրումները՝

2) Տարվա սկզբում յեղած յուրաքանչյուր հարյուր մաքիներից սահմանել 80 գլուխ գառների աճեցման տարեկան նորման.

2) Տարվա վերջում բրիգադի համար սահմանված նորմայից ավելի աճեցրած գառներից այդ նույն բրիգադի յուրաքանչյուր կոլխոզնիկին տրվում է նատուրայով 2—4 գառ, նայած թե ինչ չափով է գերակատարված մատղաշների աճեցման տարեկան արտադրական առաջադրանքը.

3) Յուրաքանչյուր անգամ և յուրաքանչյուր բրիգադի համար, նայած արտադրական առաջադրանքի գերակատարմանը, կոլխոզի վարչութիւնը կոնկրետ վորոշում է կայացնում՝ վորքան գլուխ գառներով պարգևատրել կոլխոզնիկներին.

4) Տարեկան արտադրական առաջադրանքից ավելի աճեցրած մյուս գառների համար բրիգադին տրվում է դրամական վարձատրութիւն հետեւյալ սահմաններում՝

5352

ա) Մերինոս և կարակուլ խոյերով զուգավորված և հաջող ծնեցրած յուրաքանչյուր մաքու համար 3 ո.

բ) Բալբաս ցեղի խոյերով զուգավորված և հաջող ծնեցրած մաքու համար 3 ո.

գ) Տեղական մյուս ցեղերի խոյերով զուգավորված և հաջող ծնեցրած մաքու համար 1 ո.

5. Պարգևատրման 25⁰/օ-ը վճարվում է վոչխարների զուգավորելու ժամանակ, իսկ մնացած 75⁰/օ-ը հաջող կերպով ծնեցնելուց հետո:

Համաձայն հայաստանի Հ. Ժ. Կ. Կոլեգիայի 25/VI վորդման, ֆերմաներում մատղաշների սատկումների առթիվ սահմանված են հետևյալ տույժերը՝

Մինչև յերկու ամսական հասակը յուրաքանչյուր սատկած գառան համար դրանում հանցավոր կոլտնտեսականի հասանելիք աշխորերից պահել 1,5 աշխատանքային ուր, իսկ յերկու ամսականից բարձր, յուրաքանչյուր սատկած գառան դիմաց վոչ պակաս, քան 5 աշխատանքային ուր:



9112 25 4.

22-184



Л. БОЛИБЕКЯН

По змывному содержанию овец

Сельхозгиз

1984

Земля